

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԺԲ.00.02- «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոնիցինգայ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН СЮЗАННА АРМЕНОВНА

АДМИНИСТРАТИВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ
В ТАМОЖЕННОЙ СФЕРЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право - конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН - 2025

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկ., դոցենտ

Վարդան Նորիկի Այվազյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գևորգ Բալաբեկի Դանիելյան

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ռուստամ Զասմի Մախմուդյան

**Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 27-ին ժ. 14³⁰-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հոկտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ

ժ. Ա. Ստեփանյան

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юридических наук, доцент

Вардан Норикович Айвазян

Официальные оппоненты:

доктор юрид. наук, профессор

Геворг Балабекович Даниелян

кандидат юрид. наук, доцент

Рустам Джасмович Махмудян

Ведущая организация:

**Институт философии, социологии и
права Национальной академии наук Республики Армения**

Защита состоится 27-ого ноября 2025 года в 14³⁰ часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 24 октября 2025 года.

Ученый секретарь специализированного совета:

кандидат юридических наук, ассистент

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ցանկացած պետության մաքսասակագնային քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ մաքսային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգն է: Ակնհայտ է, որ մաքսային իրավախախտումների համարժեք իրավական ամրագրումը և դրանց համար վարչական պատասխանատվության կիրառումն ունի կարևոր նախականիչ նշանակություն այնքանով, որքանով մաքսային գործի պատշաճ կազմակերպումը հնարավոր չէ պատկերացնել առանց վարչաիրավական ներգործության միջոցների:

Հայաստանի երրորդ Հանրապետության անկախ մաքսային համակարգը ստեղծվել է 1992 թ. հունվարի 4-ին՝ ՀՀ նախագահի հրամանագրով: Միաժամանակ, ՀՀ կառավարության 1992թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության մասին» թիվ 68 որոշմամբ հաստատվել է ՀՀ մաքսային վարչարարության ժամանակավոր կանոնադրությունը, որի համաձայն՝ ՀՀ մաքսային վարչությունը հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծվում է ՀՀ նախագահի կողմից, իրականացնում է մաքսային քաղաքականություն և մաքսային գործի կառավարում: Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների համակարգում իրենց ուրույն տեղն ունեն մաքսային մարմինները, որոնք ապահովում են ՀՀ տնտեսական ինքնուրույնությունն ու անվտանգությունը:

2015 թվականի հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունը դարձավ 2014 թվականի մայիսի 29-ին հիմնադրված Եվրասիական տնտեսական միության անդամ, ինչը սկզբունքորեն նոր կարգավորումներ առաջադրեց հասարակական կյանքի տնտեսական, և առաջին հերթին՝ արտաքին տնտեսական գործունեության և մաքսային կարգավորման ոլորտում: Այնուհետև Հայաստանի Հանրապետությունում կիրառվեցին Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային հիմքի ձևավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերը: Հատկապես, առանձնակի տեղ է գրավում մաքսային հարաբերությունները կարգավորող համապարփակ նոր կոդիֆիկացված ակտը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների մակարդակով 2009 թվականի նոյեմբերի

27-ին ընդունված «Մաքսային Միության մաքսային օրենսգրքի մասին» համաձայնագիրը: Այն, փաստորեն, դարձավ միասնական տնտեսական տարածության մաքսային իրավարգավորման համընդհանուր ուղենիշները սահմանող միջազգային պայմանագիր, որով փաստորեն Միության անդամ չհանդիսացող պետությունների հետ իրականացվելու էր միասնական մաքսասակագնային քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործը մաքսասակագնային կարգավորման, ինչպես նաև այլ միջոցառումների պահովման ձևերի ու մեթոդների ամբողջություն է, որի շնորհիվ կարգավորվում է երկրի արտաքին առևտրային գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմքերին սպառնացող ներքին վտանգներից մեկն էլ մաքսային գործի պատշաճ կազմակերպման դեմ ունեցող իրավախախտումներն են, որոնք շատ հաճախ դրսևորվում են ինչպես քաղաքացիների, այնպես էլ իրավաբանական անձանց կողմից մաքսային գործառնությունների իրականացման գործընթացում:

Արտաքին տնտեսական հարաբերություններում մաքսային իրավահարաբերությունների մասնակիցները միշտ չէ, որ մաքսային գործառնություններն իրականացնում են սահմանված իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Հաճախ նրանց գործողությունները, երբեմն էլ անգործությունը պատճառ են հանդիսանում մաքսային կանոնների կամ մաքսային օրենսդրությամբ ամրագրված այս կամ այն իրավական ակտի պահանջների խախտումների, որոնք, ըստ հասարակական վտանգավորության աստիճանի և պետությանը հասցված վնասի չափերի, դասվում են մաքսային, վարչական կամ քրեական իրավախախտումների շարքին:

Ասվածի համատեքստում դեռևս համալիր հետազոտություններ չի իրականացվել պարզելու իրավախախտումների պատճառներն ու նպաստող պայմանները, այդ թվում՝ իրավական առավել ողջամիտ կարգավորումներ առաջադրելու խնդիրը, ինչին հանգամանորեն անդրադարձ է արվել ատենախոսությունում:

Մաքսային իրավախախտումները տարաբնույթ են, և պատասխանատվության միջոցները նախատեսված են ինչպես «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով: Մաքսային իրավունքի միջազգային իրավական

աղբյուրների շարքում առանձնանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրը (*այսուհետ՝ Միության օրենսգիրք*), որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Միության օրենսգրքով սահմանված մաքսային գործի բաղադրիչների համարժեք կենսագործման, ներառյալ՝ դրանց դեմ վարչաիրավական ներգործության միջոցների կիրառման կարգը հնարավորինս բարելավելու անհրաժեշտությամբ է պայմանավորված թեմայի ընտրությունը: Ակներև է, որ վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում ունի էական առանձնահատկություններ, որոնք ի թիվս այնի, պայմանավորված են հենց նյութական՝ մաքսային իրավունքով: Հետևապես, ատենախոսությամբ արծարծվող հարցերի արդիականությունը պայմանավորված է նաև հենց այն իրողությամբ, մասնավորապես դրանով առաջադրվել են միջազգային իրավական լուծումներն առավել համարժեք մոտարկելու, իրավախախտումներն առավել տրամաբանական հիմքով դասակարգելու գիտագործնական մեթոդաբանության և նույնաբնույթ այլ հարցադրումներին առնչվող եզրահանգումներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև վերաբերելի միութենական իրավակարգավորումները միասնականացնելու, քանզի ակնհայտ է, որ ԵԱՏՄ-ում ինտեգրացիոն գործընթացների հնարավոր խորացումը ենթադրում է նաև մաքսային իրավախախտումների միասնական և անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների հայեցակարգային ընդհանրության ապահովում: Մաքսային իրավախախտումների գիտագործնական վերլուծությունները, ներառյալ՝ դրանցում օրենսդրական բացերի, սխալ կամ տարակերպ մեկնաբանման տեղիք տվող ձևակերպումների շտկմանն ուղղված առաջարկներն էական նշանակություն ունեն նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել գործունե րաշխիքների սահմանման իմաստով ևս, քանզի հնարավորություն են արդյունավետ հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գիտագործնական չափանիշների հիման վրա համակողմանիորեն ուսումնասիրել մաքսային ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը, միջազգային փորձը, Հայաստանի Հանրապետությունում դրա իրավասահմանման և իրավակիրառման գործընթացները, այդ առնչությամբ առկա

հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ներկայացնել հիմնավորված առաջարկություններ ու եզրահանգումներ, որոնք կարող են պիտանի լինել վարչական իրավունքի տեսական հիմքերը սույն հետազոտության առարկան կազմող հարցերի վերաբերյալ առավել համալիր դարձնելու տեսանկյունից, ինչն էլ կարող է նպաստել մաքսային ոլորտը և վարչական վարույթը կարգավորող օրենսդրության, վարչական մարմինների գործունեությունը, դրա նկատմամբ դատական վերահսկողությունը բարելավելուն և մարդու իրավունքների համակողմանի պաշտպանությունն ապահովելուն:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել մաքսային և վարչական հարաբերությունները կարգավորող սահմանադրական, միջազգային և ներպետական իրավակարգավորումները,
- հետազոտել մաքսային ոլորտում վարչական պատասխանատվությանն առնչվող ներպետական օրենսդրությունը և ներկայացնել դրա գեներելիս,
- որոշարկել մաքսային հսկողության իրականացման սկզբունքները և մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ ոտնձգող իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկությունները,
- ներկայացնել իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի, առանձնահատկությունները, այդ թվում՝ մեղքի գնահատման, իրավաբանական անձի և նրա աշխատակցի (պաշտոնատար անձի) վարչական պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրները, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի և դրա հիմնախնդիրների բարելավման ուղղությունները,
- ներկայացնել մաքսային հայտարարագրման ինստիտուտի նշանակությունը իրավական և գործնական տեսակետից,
- հետազոտել և բացահայտել մաքսային տարանցման ընթացակարգը՝ իրավախախտումների կանխարգելման նպատակով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մաքսային հայտարարագրմանը, մաքսային հսկողությանը և մաքսային արժեքի որոշմանը և մաքսային իրավական այլ հիմնարար ինստիտուտներին վերաբերող միութենական օրենսդրությամբ սահմանված կարգի դեմ ոտնձգող իրավախախտումներն են, դրանց համար վարչական պատասխանատվության առանձնահատկությունները և դրանց

դասակարգման գիտահեն մեթոդաբանության մշակումն ու չափանիշների առանձնացումը: Ուսումնասիրության առարկան, օբյեկտով պայմանավորված, ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, իրավախախտումը՝ որպես վարչական պատասխանատվության հիմք, վարչական պատասխանատվության իրավական բնութիւն առնչվող հարցերը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հետազոտության տեսական հիմքն են արտասահմանյան հեղինակներ Յ.Ս.Ժանտատովայի, Մ.Մ. Ռասոլովայի, Ա.Վ. Ագապովի, Յու.Ս. Ադուլկինի, Է.Վ. Վիգովսկու, Բ.Ն. Գաբրիչիձեի, Ա.Պ. Կորեմնի, Ա. Ա. Միխայլովի, Յու. Մ. Կոզլովի, Լ.Լ. Պոպովի, Յու. Պ. Սոլովեյի, Է. Ն. Ռենովի, Ա.Յու. Յակիմովի, Ն.Դ. Էրիաշվիլու, Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոի, Է. Ջոհաննեսի, Ջ. Քոֆֆի, հայրենական գիտնականներ՝ Գ. Դանիելյանի, Տ. Խաչիկյանի, Գ. Ա. Սուքիասյանի, Ն. Գ. Սուքիասյանի և այլ տեսաբանների դոկտորինալ հայացքները, աշխատություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Հաշվի առնելով մաքսային և վարչական իրավունքի ճյուղերի փոխկապակցվածությունը, վերլուծության են ենթարկվել նաև Կ.Ռ. Մակքոնելի, Ի.Վ. Կարովևայի, Վ.Ռ. Կիսինի, Է.Ս. Պավլովայի, Վ.Ե. Սելվյուգինայի, Վ.Վ. Սելվանովի, Վ.Ն. Կուրյավցևի, Ն.Ֆ. Կուզնեցովայի, Բ.Ա. Կուրինովի, Գ.Ա. Լևիցկու և այլ գիտնականների վարչական իրավախախտումների որակավորման և պատժամիջոցների կիրառման խնդիրներին վերաբերելի դիրքորոշումներն ու աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային իրավական փաստաթղթերը, օրենքներն ու այլ իրավական ակտերը: Հետազոտության փորձառական հիմքն են Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերը, Եվրասիական տնտեսական միության մարմինների իրավական ակտերը, Սահմանադրական դատարանի որոշումները, Վճռաբեկ դատարանի դատական ակտերը, օտարերկրյա դատարանների, առավելապես՝ ՌԴ, ԱՄՆ դատարանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Ուսումնասիրվել են նաև արդեն իսկ գործող մաքսային համակարգի հիմնադիր փաստաթղթերը և վիճակագրական տվյալները:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանությունը խնդիրներին և նպատակներին համապատասխան կիրառվել են թե՛ համագիտական, թե՛ մասնավոր գիտական մեթոդներ: Մասնավորապես, հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական նշանակություն ունեցող մեթոդները՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ և այլն, այնպես էլ մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, տեղեկատվական-վերլուծական, պատմաիրավական և այլն: Աշխատանքում կիրառվել է նաև պատմական մեթոդը, որով, փաստորեն, խնդրո առարկա ինստիտուտի պատմական զարգացման համատեքստում առավել ակնառու է դարձել դրա էության բացահայտումը:

Իրավահամեմատական մեթոդի միջոցով համեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների օրենսդրության համապատասխան դրույթները, միջազգային իրավական մարմինների կողմից առաջադրված ընդհանուր մոտեցումները, իսկ պատմաիրավական մեթոդը, փաստորեն, խնդրո առարկա ինստիտուտի պատմական զարգացման համատեքստում առավել ակնառու է դարձրել վերջինիս էության բացահայտումը:

Արդյունքում՝ մինևույն հարցադրումների և առկա խնդիրների վերաբերյալ համադրվել են տարբեր իրավական համակարգերի ներկայացուցիչների դիրքորոշումները և փորձ է արվել ընտրել դրանցից հայրենական իրավական համակարգին առավել բնորոշ և կիրառելի մոտեցումներն և եզրահանգումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, ՀՀ և օտարերկրյա օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների հիման վրա բացահայտվել է մաքսային իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու էությունը, ժամանակակից մոտեցումներին և պահանջներին համահունչ՝ առաջարկներ են կատարվել օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ: Հետազոտության շրջանակներում բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ՝ մաքսային և հարկային ոլորտներում ծագող վարչական պատասխանատվությանն առնչվող իրավական դաշտը, կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ հիմքում ունենալով միջազգային լավագույն փորձը, կատարվել են իրավական բարեփոխումների

մի շարք առաջարկներ:

Հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է ի թիվս այնի, նրանում, որ դրա շրջանակներում համապարփակ կարգավորման առարկա են դարձել մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության վարույթի առանաձնահատկությունները, նախանշվել քննարկվող ինստիտուտի կատարելագործման հեռանկարները և անհրաժեշտ գիտական ընդհանրացումների հիման վրա ամրագրվել ընդունելի լուծումներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1) Հիմնավորվել է մաքսային իրավախախտումների կազմը և օրենսդրական կարգավորման չափանիշները առավել համապարփակ կարգավորելու անհրաժեշտությունը: Ընդ որում, դրանց դասակարգումը առաջարկվել է առաջնահերթ փոխկապակցել իրավախախտման կոնկրետ օբյեկտներով, ինչն իր հերթին հնարավորություն կտա ձևավորելու միասնական իրավակիրառ պրակտիկա՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում: Բացի այդ, կարգավորման այս հայեցակարգի պարագայում օրենսդրական վերաբերելի կարգավորումը կիրացվի ոչ թե սոսկ մեխանիկական չափանիշներով, այլ հիմքում կդրվեն իրավախախտման հատկանիշները, ինչն էլ իր հերթին որոշակի նշանակություն կունենա նաև մաքսային վիճակագրությունը պատշաճ վարելու, հետևաբար՝ իրավակիրառ պրակտիկան առավել վերահսկելի ու կանխատեսելի դարձնելու տեսանկյունից:

2) Ըստ այդմ, առաջարկվել է ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ որպես մաքսային կանոնների խախտում դիտարկվող արարքները դասակարգել միմյանց հետ որոշակիորեն փոխկապակցված, բայցև առարկայական ինքնաբավություն ունեցող երեք խմբերի, որոնք ներկայացված են առենախոսությունում: Հիմնավորվել է, որ մաքսային իրավախախտման համար վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել ոչ միայն ֆիզիկական (պաշտոնատար) անձը, այլ նաև իրավաբանական անձը: Այս համատեքստում առաջարկվել են որոշակի բարեփոխումներ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում, մասնավորապես՝ առաջարկվել է վերանայել 301-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված այն կատեգորիկ մոտեցումը, որի համաձայն՝ մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության ֆիզիկական և պաշտոնատար անձինք: Մեր կարծիքով, այսպիսի մոտեցումը ներքին հակասության մեջ է նաև հիշյալ իրավական ակտի հետ, որի համաձայն՝ մաքսային գործի

բնագավառում գործունեություն իրականացնող անձինք գրեթե ամբողջությամբ իրավաբանական անձինք են (ԵԱՏՄ մաքսային օրենսգիրք 397-443-րդ հոդվածներ): Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու այնպիսի հայեցակարգի մշակումն ու կիրառումը, որի համաձայն՝ մաքսային իրավախախտման համար իրավաբանական անձը ենթակա է վարչական պատասխանատվության, եթե այն կատարվել է՝

1) ի շահ տվյալ իրավաբանական անձի որևէ իրավական հիմքով հանդես գալու իրավունք ունեցող կամ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում որոշակի մասնակցություն ունեցող ֆիզիկական անձի կողմից կամ

2) օրենքով տվյալ իրավաբանական անձի վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ որոշակի գործունեության իրականացման պայմանները կամ արգելքները խախտելու, կամ իր կանոնադրությանը կամ հիմնադիր փաստաթղթերին չհամապատասխանող գործունեություն իրականացնելու արդյունքում:

Ընդ որում, այս մոտեցումը լիարժեք ներդաշնակ է նաև թիվ ՎԴ/4748/05/19 վարչական գործով վճռաբեկ դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ սահմանված եզրահանգումներին այնքանով, որքանով նշված որոշմամբ ևս մաքսային ներկայացուցչի աշխատողին վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը փոխկապակցվում է կատարված արարքում հայտարարատուի և (կամ) մաքսային ներկայացուցչի իրավաբանական անձի աշխատակցի մեղավորության հետ:

3) Առաջադրվել է եզրահանգում, ըստ որի՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքով պատասխանատվության տեսակների և չափերի սահմանման հիմքում միշտ չէ, որ դրված է անհրաժեշտ ոլորտային կողմնորոշիչ: Մաքսային միության անդամ պետության մի տարածքից մյուս անդամ պետություն, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն, տեղափոխվող ԵԱՏՄ ապրանքների համար տարանցման հայտարարագիր չլրացնելու համար սահմանված է վարչական պատասխանատվություն՝ բացառապես «նախագգուշացում» վարչական տույժի տեսքով: Մինչդեռ՝ իրավակիրառ պրակտիկայում հաճախակի են դեպքերը, երբ օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետությունը դիտելով որպես տարանցման երկիր, ԵԱՏՄ անդամ մի պետությունից ՀՀ սահմանով ԵԱՏՄ անդամ մեկ այլ երկիր են տեղափոխում ապրանքներ կամ տրասնպորտային միջոցներ, չհայտարարագրելով կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելով տեղափոխվող բեռը՝ ակնկալելով, որ չհայտարարագրելու կամ ոչ ճիշտ տեղեկություններով հայտարարագրելու

արդյունքում ենթարկվելու են բացառապես նախազգուշացման: Այսպիսի դեպքերը բազմաթիվ են և ներկայացված են աշխատության այլ հատվածներում ևս: Նման խնդիրները հնարավորինս բացառելու օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվել է մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության միջոցները սահմանելու հարցում հաշվի առնելով հետևյալ իրավական վավերապայմանները՝

- իրավախախտման հետևանքով առաջանում է արդյոք չվճարված կամ թերի վճարված մաքսային վճարների գծով պարտավորություն,

- իրավախախտման հետևանքով խաթարվում է մաքսային հսկողության և ձևակերպման սահմանված կարգն այնպես, որ էականորեն գրկի մաքսային մարմնին կոնկրետ որոշակի մաքսային հսկողության ձևի (միջոցի) արդյունավետ իրացումն ապահովելու գործիքակազմից:

Ընդ որում, պաշտպանության ներկայացվող սույն դրույթում առաջարկվել է նաև էապես վերանայել նույն արարքը կրկին անգամ կատարելու դեպքում վարչական պատասխանատվություն սահմանելու հարցում առկա մոտեցումը՝ դրա ամրագրումը դարձյալ, ի թիվս այլնի, պայմանավորելով վերը բերված չափանիշներով:

4) Իրավակիրառ պրակտիկայում առաջացող հնարավոր բազմաթիվ տարակարծությունների կանխման և միասնական կանխատեսելի գիտական մոտեցումներ ձևավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատանքում նախանշվել է այն դիրքորոշումը, որ որպես հայեցակարգային կանխադրույթ՝ անհրաժեշտ է առհասարակ զերծ մնալ իրավակարգավորման այն մոդելից, որը սահմանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի կիրառելիություն մաքսային կանոնի խախտման վերաբերյալ վարույթի նկատմամբ, այսպես կոչված՝ սուբսիդիարության (լրացուցչության) սկզբունքով՝ այնքանով, որքանով խնդիրը չի կարգավորվում մաքսային օրենսդրությամբ:

5) Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարույթի էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հայտարարատուն նշված հարաբերություններում կարող է հանդես գալ թե՛ անմիջականորեն, թե՛ մաքսային ներկայացուցչի կամ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող այլ անձի միջոցով: Դրանով պայմանավորված՝ հիմնավորվել է օրենսդրորեն, ի թիվս այս վարույթին վերաբերող այլ հիմնարար սկզբունքների ամրագրման, նաև անձնական պատասխանատվության սկզբունքի առանձնահատկությունները քննարկվող իրավախախտումներով վարույթի ընթացքում կարգավորելու անհրաժեշտությունը: Ընդ որում, հաշվի առնելով վարչական պատասխանատվության բոլոր դրսևորումների

պարագայում միանշանակ գործող ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը՝ առաջարկվում է օրենսդրոեն հստակ կանոնակարգել մաքսային վճարային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով մաքսային մարմինների կողմից վերցված ապրանքների վերադարձման ընթացակարգը՝ կարգավորման հիմքում դնելով այն հիմնադրույթը, որ անձը մաքսային կանոնի խախտման համար պատասխանատվություն պետք է կրի բացառապես իր մեղքի առկայության դեպքում: Այն հնարավորություն կտա տարբերակելու վերցված ապրանքների վերադարձին վերաբերող կարգավորումներն այն պարագայում, երբ մաքսային կանոնի խախտումը կատարվել է ապրանքի սեփականատեր չհանդիսացող անձի կողմից:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը մաքսային իրավախախտումների համար ֆիզիկական և իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու՝ որպես ինքնուրույն ինստիտուտի համալիր և խորը վերլուծությունն է, ինստիտուտի զարգացման հիմնական միտումները վեր հանելն ու այնպիսի հայեցակարգային կարգավորումներ առաջարկելը, որոնք թույլ կտան կիրառել այս ինստիտուտը ժամանակակից միտումներին և իրողություններին համահունչ:

Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները, եզրահանգումները և դրանց հիման վրա ներկայացված առաջարկները կարող են կարևոր նշանակություն ունենալ մաքսային իրավունքի գիտության, հարկային և մաքսային օրենսդրության զարգացման համար: Ատենախոսությունում արված վերլուծությունները լրացնում են մաքսային իրավահարաբերություններում կիրառելի վարչական պատասխանատվությանը վերաբերող տեսական գրականությունը, իսկ հետազոտության արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել հարցին նվիրված հետազոտ ուսումնասիրություններում, քննարկումներում, ուսումնական գործընթացում, իրավաստեղծ գործունեության ոլորտում, օրենսդրության կատարելագործման, դրանում առկա բացերն ու հակասությունները վերացնելու համար, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ միասնական պրակտիկա ձևավորելու համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը դրսևորվում է նրանով, որ հետազոտության առարկան կազմող հարցերի վերաբերյալ վերլուծությունը, եզրահանգումներն ու առաջարկները կարող են հիմք հանդիսանալ մաքսային ոլորտը կարգավորող օրենսդրության հետազոտ կատարելագործման նպատակով իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացների համար, դրանում առկա բացերն ու հակասությունները վերացնելու համար, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ միասնական

պրակտիկա ձևավորելու համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև համալսարանական գիտաժողովներին ներկայացրած զեկույցներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դրանցում ընդգրկված վեց պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկ նյութերի ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, արդյունքների հիմնավորվածությունն ու արժանահավատությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպել է գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության բնույթը, իրավական հիմքերը և դրանց կատարելագործման միտումները» վերտառությամբ 1-ին պարագրաֆում անդրադարձ է կատարվել միջազգային և ներպետական իրավական կարգավորումներին, ինչի արդյունքում կատարվել է եզրահանգում, որ վարչարարության հիմնարար սկզբունքները համակարգային նշանակություն ունեն բոլոր տեսակի վարչական վարույթների համար: Ինչ վերաբերում է առանձնահատկություններին, ապա դրանք կարող են վերաբերել միայն այնպիսի ընթացակարգային դրույթներին, որոնք հակասության մեջ չեն հիմնարար սկզբունքների հետ: Վերջինիս առթիվ հեղինակն առաջարկել է մաքսային իրավախախտման վերաբերյալ վարույթի օրենսդրական կարգավորումն իրականացնելիս առաջնորդվել կարգավորումների ինքնաբավության հայեցակարգային գաղափարով՝ դրանում սահմանելով բացառապես ընթացակարգային առանձնահատկությունները: Ասվածը բխում է նաև այն իրողությունից, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգավորումները երբևիցե չեն կարող ստորադասվել ի հաշիվ որևէ հատուկ վարույթի կարգավորումների: Ուստիև, այս համատեքստում ամբողջությամբ իրատեսական է համարվում մաքսային իրավախախտման վերաբերյալ վարույթին առնչվող կարգի սահմանումն Օրենքի առանձին գլխի շրջանակներում՝ առանց պայմանավորելու «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի կարգավորումներով:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Մաքսային իրավախախտումը՝ որպես վարչական պատասխանատվության հիմք» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը առաջարկել է օրենսդրորեն հստակեցնել մաքսային իրավախախտումների կազմը և օրենսդրական կարգավորման տրամաբանությունը՝ դրանց դասակարգումը պայմանավորելով այն օբյեկտներով, որոնց դեմ կատարվում է ոտնձգություն մաքսային տվյալ իրավախախտմամբ, ինչն իր հերթին հնարավորություն կտա ձևավորելու միասնական իրավակիրառ պրակտիկա՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում: Բացի այդ, կարգավորման այս հայեցակարգի դեպքում օրենսդրական վերաբերելի կարգավորումը կիրացվի ոչ թե մեխանիկական հիմունքներով, այլ հիմքում դնելով իրավախախտման բնույթը, ինչն էլ իր հերթին որոշակի նշանակություն կունանա նաև մաքսային վիճակագրության պատշաճ վարման իմաստով: Ատենախոսության սույն հատվածում կատարած հետազոտությունների և վերլուծության արդյունքում հեղինակը առաջարկել է ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ որպես մաքսային կանոնների խախտում դիտարկվող արարքները բաժանել միմյանց հետ որոշակիորեն փոխկապակցված, բայց առարկայական ինքնաբավություն ունեցող երեք խմբերի՝ մաքսային արժեքի որոշման սահմանված կարգի դեմ ոտնձգող իրավախախտումներ, մաքսային հսկողության և ձևակերպման սահմանված կարգի դեմ ոտնձգող իրավախախտումներ, մաքսային հայտարարագրման սահմանված կարգի դեմ ոտնձգող իրավախախտումներ:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Իրավաբանական անձինք՝ որպես մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության սուբյեկտներ» 3-րդ պարագրաֆում հեղինակը փորձել է համակարգային վերլուծության միջոցով ներկայացնել իրավաբանական անձանց մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության ինստիտուտը, միջազգային փորձը և դրա հիման վրա ներկայացված է արդի ժամանակաշրջանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների խորապատկերում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հայեցակարգային հիմնադրույթները, վեր են հանվել քննարկվող հիմնախնդրի առնչությամբ օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները, մասնավորապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ գործող օրենսգրքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նախագծի առկա բացերը և թերությունները, մշակված են դրանց բարելավման արդյունավետ ուղիներ: Արդյունքում, հաշվի առնելով այս օբյեկտիվ իրողությունները, դրանց բախումներն ու հակազդեցությունները՝ հեղինակը եզրահանգել է, որ իրավաբանական անձի՝ որպես վարչական պա-

տասխանատվության սուբյեկտի առանձնահատկությունները, այդ թվում՝ մեղքի գնահատման, իրավաբանական անձի և նրա աշխատակցի վարչական պատասխանատվության հիմնախնդիրները վերհանելիս, հարկ է պարզել արդյո՞ք վերջինս ունեցել է հնարավորություն՝ պահպանելու սահմանված կանոնները և նորմերը, որոնց խախտման համար սահմանված է պատասխանատվություն, և արդյո՞ք իրավաբանական անձն օգտվել է այդ հնարավորությունից, ձեռնարկել է համապատասխան միջոցներ՝ այդ նորմերը պահպանելու և վարչական իրավախախտումները կանխելու ուղղությամբ:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Մաքսային հսկողության և ձևակերպման սահմանված կարգի դեմ ունեցող իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը փորձել է համակարգային վերլուծության միջոցով ներկայացնել մաքսային արժեքի բովանդակությունը կազմող բաղադրիչները՝ հիշյալ դրույթի բովանդակությունն առավել ամբողջական ընկալելու համար: Մասնավորապես՝ բացահայտված առաջին խնդիրը կապված է մաքսային արժեքում ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա գումարների ներառման հետ: Այստեղ մեկնաբանված չէ, թե ի՞նչպես պետք է կատարվի բաշխումն այն դեպքում, եթե թույլտվությունները վերաբերում են որոշակի ժամանակահատվածին, կամ առհասարակ բաշխում պետք է կատարվի, թե՞ ոչ:

Գործնականում խնդիր է առաջանում, արդյո՞ք ամբողջ թույլտվության արժեքը հարկ է վերագրել մեկ ամբողջական խմբաքանակին, թե այն հարկ է վերագրել տվյալ պահին իրականացվող խմբաքանակի մի մասի ներմուծմանը: Մյուս կողմից՝ դժվար է գնահատել հետագայում ներմուծումներ կամ արտահանումներ կիրականացվեն, թե ոչ, և ինչ ծավալով, եթե անգամ ստացողի և բեռնառաքողի միջև տվյալ խմբաքանակի առնչությամբ առկա են պայմանագրային իրավահարաբերություններ:

Արդյունքում, հեղինակն առաջարկել է, ռոյալթիների և թույլտվությունների արժեքն ամբողջությամբ ներառել մաքսային արժեքում, պայմանով, որ հետագա ներմուծումների դեպքում դա կրկնակի չներառվի մաքսային արժեքում:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Մաքսային հայտարարագրման և ձևակերպման հետ կապված իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը քննարկել է մաքսային հայտարարագրման և ձևակերպման հետ կապված իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով կանոնակարգելու և պատշաճ կարգով հսկողություն իրականացնելու Հայաստանի

Հանրապետություն ներմուծվող, արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների քանակը, ապրանքաշրջանառությունը: Հետաքրքիրն այն է, որ տնտեսվարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետությունը դիտելով որպես տարանջման երկիր, ԵԱՏՄ անդամ մի պետությունից ՀՀ սահմանով ԵԱՏՄ անդամ մեկ այլ երկիր են տեղափոխում ապրանքներ կամ տրանսպորտային միջոցներ, չհայտարարագրելով կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելով տեղափոխվող բեռը՝ ակնկալելով, որ չհայտարարագրելու կամ ոչ ճիշտ տեղեկություններով հայտարարագրելու արդյունքում ենթարկվելու են բացառապես նախազգուշացման: Նշվածի համատեքստում, ճշգրիտ հայտարարագրում իրականացնելու նպատակով, հեղինակն առաջարկել է խստացնել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան ինչպես ոչ ճշգրիտ տեղեկություններով ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետություն ներմուծման դեպքերի համար, այնպես էլ նշված ապրանքներն ու տրանսպորտային միջոցները որպես տարանցիկ երկիր Հայաստանի Հանրապետությունից Մաքսային Միության այլ երկրներ տեղափոխման դեպքերի համար, նկատի ունենալով, որ որպես տարանցիկ երկիր Հայաստանի Հանրապետությունով առաքվող բեռների չհայտարարագրումը կամ ոչ ճիշտ հայտարարագրումը կարող է էական ռիսկեր պարունակել հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման կամ ընդհանրապես հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու համար: Հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում հեղինակը տրամաբանական է համարում այնպիսի հետևությունը, որ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխան զանցակազմի համար առաջադրել է պատասխանատվություն տուգանքի ձևով, որը կարող է հաշվարկվել ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ որոշակի տոկոսի չափով: Ընդ որում, հեղինակը ուշադրության է արժանացրել այն հանգամանքը, որ նույն արարքի կրկին կատարումն այս պարագայում օժտված է հանրային վտանգավորության բարձր աստիճանով, ինչով էլ պայմանավորված՝ առաջարկվել է դրա համար սահմանել պատասխանատվության առավել խիստ չափ:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Մաքսային հայտարարագրման և ձևակերպման հետ կապված իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման դեպքում վարչական պատասխանատվության փոխադրողի

պարտականություններին: Ապրանքների սխալ կամ ոչ ճիշտ տեղեկություններով հայտարարագրման համար փոխադրողները ենթարկվում, կամ նույնիսկ շատ հաճախ մեղքի բացակայության հիմքով ազատվում են վարչական պատասխանատվությունից, այն դեպքում երբ ապրանքներ ներմուծող ընկերությունները ստանում են հսկայական շահույթներ՝ հաճախ շրջանցելով պատասխանատվությունը, քանզի գործող օրենսդրությամբ առկա չէ որևէ իրավակարգավորում, որը զսպող միջոց հանդիսանար ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տարատեսակ ապրանքների մուտքը կանխարգելելու համար: Նշվածի վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն հետևության, որ իրավախախտման սուբյեկտ պետք է դիտել ոչ թե կոնկրետ փոխադրողին, այլ ապրանքի նկարագրության վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ տրամադրող անձին: Ընդ որում, այդ պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքի սկզբունքը: Արդյունքում՝ խնդրի կարգավորման նպատակը այն է, որ կնվազեն հսկայական խմբաքակով ապրանքների ոչ ճիշտ հայտարարագրմամբ Հայաստանի Հանրապետության տարածք տեղափոխման դեպքերը և օրենսդրական կարգավորումը թույլ կտա զերծ մնալ գործնականում հանդիպող բազում բացասական հետևանքներից:

Ատենախոսության եզրակացությունում առանձնացվել են հետևյալ եզրահանգումները՝

1) Կատարված ուսումնասիրությամբ առաջարկվել է վերանայել ապրանքների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման համար վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի էությունն ու առանձնահատկությունները՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրելով այնպես, որ նախատեսվի դրամական արտահայտությամբ պատասխանատվության միջոց ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու համար: Ընդ որում, առաջարկվել է խստացնել պատասխանատվությունն այն դեպքերում, երբ նշված իրավախախտումը կատարվել է կրկին:

2) Որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված ապրանքների իրական տվյալների և բեռնադեկլարացիայի փաստաթղթերում առկա տեղեկությունների անհամապատասխանության համար վարչական պատասխանատվության սուբյեկտ բացառապես փոխադրողին դիտարկելը միանշանակ չէ: Հնարավոր են դեպքեր, երբ փոխադրողը իրազեկված չի լինում ապրանքի տեխնիկական

բնութագրի մասին և ապրանքի հայտարարագրումն իրականացնում է բեռը ստացողի տրամադրած բեռնառաքող փաստաթղթերի հիման վրա: Արդյունքում ՀՀ տեղափոխված ապրանքների իրական տվյալների և բեռնուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկությունների անհամապատասխանությունն առաջանում է ոչ թե փոխադրողի, այլ բեռը ստացողի մեղքով: Այդ պայմաններում փոխադրողին վարչական պատասխանատվության ենթարկելն արդարացված չէ: Հետևաբար, անհրաժեշտ է ընդլայնել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ տեղափոխված ապրանքների իրական տվյալների և բեռնուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկությունների անհամապատասխանության համար վարչական պատասխանատվության սուբյեկտների շրջանակը՝ դրանց մեջ ներառելով նաև բեռը ստացողին, և վարչական պատասխանատվության սուբյեկտի հարցը լուծել՝ ըստ նրանց մեղքի:

3) Մաքսային ոլորտում կիրառելի վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ կարծում ենք հարկ է օրենսդրորեն ամրագրել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության իրավական հիմքերը: Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունն առանձնանում է իր կարգավորման այն աստիճանի ինքնուրույնությամբ, որը հնարավորություն է ընձեռում վերջինիս որպես վարչական պատասխանատվության ինստիտուտի՝ ինքնուրույն ենթաինստիտուտ համարելու համար:

4) Անհրաժեշտ է դրսևորել տարբերակված մոտեցում հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորությունը խախտելու համար սահմանված վարչական պատասխանատվության կիրառման հարցում՝ որպես տարբերակման հիմք ընդունելով տվյալ մաքսային իրավախախտման առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի՝ անձնական օգտագործման համար նախատեսված լինելու կամ չլինելու չափանիշը: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել առանձին վարչական պատասխանատվություն՝ հետագա ներմուծման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետությունից արտահանված տրանսպորտային միջոցը արտահանման երկրում օտարելու համար: Ընդ որում, հետագա արտահանման կամ հետագա ներմուծման պարտավորությունը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտ պետք է հանդիսանա ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձը՝ ոչ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մասով:

5) Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների մաքսային արժեքի ձևավորումը միջազգային լավագույն փորձին համահունչ դարձնելու, մաքսային ձևակերպումների գործընթացը անհարկի չձանրաբեռնելու, ինչպես նաև

ազատ տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է ապրանքների մաքսային արժեքի բաղկացուցիչները ենթարկել հետևյալ փոփոխությունների.

- ապրանքների մաքսային արժեքից պետք է հանել կոմիսիոն և բրոքերային ծախսերը,

- ռոյալթիների և թույլտվությունների արժեքը պետք է ամբողջությամբ ներառել մաքսային արժեքում՝ պայմանով, որ հետագա ներմուծումների դեպքում այն կրկնակի չներառվի նույն ապրանքի հաջորդ խմբաքանակների մաքսային արժեքում կամ ռոյալթիների և թույլտվությունների արժեքը տնտեսվարող սուբյեկտի կողմից տրված ապահովման միջոցի (օրինակ՝ բանկային երաշխիքի) առկայության դեպքում այն բաշխվի տրված թույլտվության ողջ ժամանակահատվածի վրա,

- բազմակի օգտագործման տարաների արժեքը պետք է ներառել մաքսային արժեքում՝ այն դեպքում, եթե դրանք ենթակա են վերաարտահանման: Այս պարագայում բազմակի օգտագործման տարայի արժեքն ապրանքների մաքսային արժեքում պետք է ներառվի տվյալ գործարքում դրա օգտագործման արժեքին համամասնորեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմակի օգտագործման տարաներն այդ գործարքի շրջանակներում ամբողջությամբ չեն փոխանցում իրենց արժեքը մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների արժեքին:

6) Անհրաժեշտ է սահմանել նշանակված վարչական տույժի կատարումը երաշխավորող կառուցակարգ այն դեպքերում, երբ մաքսային հայտարարագրման կանոնների խախտման զանցակազմի առարկա են հանդիսանում ԵՏՀ կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 2-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» թիվ 30 որոշմամբ նախատեսված՝ արգելքներ և սահմանափակումներ ունեցող ապրանքները (օրինակ՝ զարդեր, թանկարժեք իրեր): Այդպիսի կառուցակարգի՝ մեր կողմից առաջարկվող տարբերակն այն է, որ անձինք հնարավորություն ունենան մաքսային պահեստից հետ ստանալու այդ ապրանքները՝ բացառապես վարչական պատասխանատվությանն ուղղված վարչական վարույթի ավարտից և նշանակված տուգանքի ամբողջական կատարումից հետո: Նման պայմաններում իրավախախտում կատարած անձը հնարավորություն չի ունենա ստանալու մաքսային մարմնի կողմից առգրավված ապրանքները, քանի դեռ չի կատարել իր նկատմամբ նշանակված վարչական տույժը: Մյուս կողմից, դա հնարավորություն կտա մաքսային մարմնին հատուկ ընթացակարգով իրացնելու իր մոտ պահվող՝ արգելքներ և սահմանափակումներ ունեցող ապրանքները (օրինակ՝ զարդեր, թանկարժեք իրեր) հոգուտ պետության, եթե

իրավախախտում կատարած անձը չի կատարել իր նկատմամբ նշանակված վարչական տույժը:

7) Անհրաժեշտ է մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության միջոցները սահմանելու հարցում հաշվի առնելով հետևյալ իրավական վավերապայմանները՝

- իրավախախտման հետևանքով առաջանում է արդյոք չվճարված կամ թերի վճարված մաքսային վճարների գծով պարտավորություն:

- իրավախախտման հետևանքով խաթարվում է մաքսային հսկողության և ձևակերպման սահմանված կարգն այնպես, որ էականորեն զրկի մաքսային մարմնին կոնկրետ որոշակի մաքսային հսկողության ձևի (միջոցի) արդյունավետ իրացումն ապահովելու գործիքակազմից:

8) Իրավակիրառ պրակտիկայում առաջացող հնարավոր բազմաթիվ տարակարծությունների կանխման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատանքում նախանշվել է այն մոտեցումը, որ որպես հայեցակարգային կանխադրույթ՝ անհրաժեշտ է առհասարակ զերծ մնալ իրավակարգման այն մոդելից, որը սահմանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի կիրառելիություն մաքսային կանոնի խախտման վերաբերյալ վարույթի նկատմամբ, այսպես կոչված, սուբսիդիարության (լրացուցչության) սկզբունքով՝ այնքանով, որքանով խնդիրը չի կարգավորվում մաքսային կարգավորման մասին օրենսդրությամբ:

9) Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարույթի էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հայտարարատուն նշված հարաբերություններում կարող է հանդես գալ թե՛ անմիջականորեն, թե՛ մաքսային ներկայացուցչի կամ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող այլ անձի միջոցով: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ է օրենսդրորեն, ի թիվս այս վարույթին վերաբերող այլ հիմնարար սկզբունքների ամրագրման, կարգավորել նաև անձնական պատասխանատվության սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները քննարկվող իրավախախտումներով վարույթի ընթացքում:

10) Նկատի ունենալով մաքսային իրավախախտումներին վերագրելի այն առանձնահատկությունը, որ դրանցով սահանված իրավախախտումների մեծ մասի սուբյեկտը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձն է՝ առաջարկվում է այս պարագայում հրաժարվել մաքսային կանոնների խախտման սուբյեկտ և՛ ֆիզիկական, և՛ պաշտոնատար անձանց դիտարկելուց՝ նկատի ունենալով, որ սույն աշխատությամբ առաջարկվող մոդելի որդեգրման պարագայում վարչական պատասխանատվության ենթարկվում է կամ ֆիզիկական

կամ իրավաբանական անձը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են
հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1) Սյուզաննա Վարդանյան, «Հայտարարագրման դերը և նշանակությունը մաքսային իրավահարաբերություններում», Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, No 117 2020, էջ 46-50:

2) Սյուզաննա Վարդանյան, «ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մաքսային արժեքի որոշման առանձնահատկությունները», Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, No 118 2020, էջ 67-74:

3) Սյուզաննա Վարդանյան, «Վարչական պատասխանատվության իրավական հիմքերը ապրանքների չհայտարարագրման կամ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրման դեպքում», Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, No 126 2021, էջ 45-50:

4) Սյուզաննա Վարդանյան, «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողի և առաքողի (էքսպեդիտորի) պարտականությունները, Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, No 130 2022, էջ 67-72:

5) Սյուզաննա Վարդանյան, «Վարչական իրավախախտում» և «մաքսային կանոնների խախտում» եզրույթների մեկնաբանումը, առկա ընդհանրություններն ու տարբերությունները, Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Գլաժոր համալսարան, 2023, էջ 161-181:

6) Սյուզաննա Վարդանյան, Իրավաբանական անձը որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ և վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում, Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր, No 17 2024, էջ 211-222:

7) Syuzanna Vardanyan, Insulting an official of the customs body while performing official duties, The fortress of law scientific and methodological journal, Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, No 17 2024, page 237-248:

ADMINISTRATIVE RESPONSIBILITY IN THE CUSTOMS SECTOR

Summary

The topic of this dissertation is relevant and relates to the adequate implementation of the components of customs affairs, including the maximum possible improvement and reform of the procedure for applying administrative and legal measures against them. The author properly conducted a comprehensive study concerning the certain types of administrative proceedings in the customs sphere and administrative responsibility.

The current classification and arrangement of the issues addressed in the dissertation is due to the very fact that its experience takes place in local offenses: from the standpoint of continuous improvement and this dissertation highlights the fundamental qualities that may be suitable for improving the legislation of administrative penalties according to predictable criteria. As a result, the author put forward the following reasoned positions:

1) The subject of administrative liability for a customs offense should be not only an individual (official), but also a legal entity. In the case of legal entities, it is necessary to define guilt as a condition for imposing liability and establish criteria for determining it.

2) One of the essential features of proceedings on cases of violation of customs rules is that the declarant can act in the specified relations either directly or through a customs representative or another person carrying out activities in the field of customs affairs. Due to this, it is necessary to legislatively, in addition to fixing other fundamental principles related to this proceedings, also regulate the features of the manifestation of the principle of personal liability during the proceedings on the violations under consideration.

3) In determining the measures of liability for violation of customs rules, the following legal requirements were taken into account:

- Does the violation result in a liability for unpaid or incompletely paid customs payments.
- Does the violation disrupt the established procedure for customs

control and formalities in such a way as to significantly deprive the customs authority of the tools to ensure the effective implementation of a specific form (means) of customs control.

In addition, the author built the dissertation on the basis of the concept that in order to improve the legal framework, it is first of all necessary to clearly define the need to balance the principles of the efficiency of administration and the protection of human rights.

Based on the analysis the author came to a number of theoretical conclusions and also made a number of recommendations concerning the improvement of legislation. The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author.

СЮЗАННА АРМЕНОВНА ВАРДАНЯН

**АДМИНИСТРАТИВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ
В ТАМОЖЕННОМ СЕКТОРЕ**

Резюме

Тема данной диссертации является актуальной и связана с адекватной реализацией субъектами таможенного дела, в том числе максимально возможного с появлением и реформированием порядка применения к ним мерно-правового воздействия. Автор надлежащим образом провел комплексное исследование относительно отдельных видов административного производства в таможенной сфере и административной ответственности.

Современная классификация и расположение вопросов, рассматриваемых в диссертации, обусловлены именно тем, что ее опыт имеет место в локальных правонарушениях: с точки зрения постоянного совершенствования и в данной диссертации выделяются фундаментальные качества, которые могут подойти для совершенствования законодательства об административных наказаниях в соответствии по предсказуемым критериям. В результате автор выдвинул следующие аргументированные позиции:

1) Субъектом административной ответственности за таможенное правонарушение должно быть не только физическое (должностное), но и юридическое лицо. В отношении юридических лиц необходимо определить вину как условие привлечения к ответственности и установить критерии ее определения.

2) Одной из существенных особенностей производства по делам о нарушении таможенных правил является то, что декларант может выступать в указанных отношениях как непосредственно, так и через таможенного представителя или иное лицо, осуществляющее деятельность в сфере таможенного дела. В связи с этим необходимо законодательно, помимо закрепления иных основополагающих принципов, связанных с данным производством, урегулировать и особенности проявления принципа личной ответственности при производстве по делам о рассматриваемых правонарушениях.

3) При определении мер ответственности за нарушение таможенных правил учитываются следующие требования законодательства:

- Влечет ли нарушение ответственность за неуплаченные или не

полностью уплаченные таможенные платежи.

- Нарушает ли нарушение установленный порядок осуществления таможенного контроля и таможенных формальностей таким образом, что это существенно лишает таможенный орган инструментов, обеспечивающих эффективное осуществление конкретной формы (способа) таможенного контроля.

Кроме того, автор строил диссертацию на основе концепции о том, что для совершенствования правовой базы в первую очередь необходимо четко определить необходимость баланса принципов эффективности управления и защиты прав человек.

На основании проведенного анализа автор пришел к ряду теоретических выводов, а также дал ряд рекомендаций по совершенствованию законодательства. Основные положения диссертации отражены в научных статьях, опубликованных автором.